

ի հեռուկս կաճէր յառաջդիմաբար՝ Պոլիսի բանիբունս արուեստագէտ գրագէտ ու առհասարակ միջակային դասին մէջ՝ փորձ կարողութիւն մը բնիկ: Այդ միջին տարրին եփուն ո՛յժն էր՝ որ ժամանակին յառաջացած պահանջներուն, անցեալին չափազանցութեանց փորձառութեան, իմաստասէրներուն, Պատրիարքներուն և բարեխնամ կտոսավարութեան շնորհներուն և միջամտութեանց հետ լծորդուելով (սակայն շատ արեւմտեան և ընդօրինակեալ ձեւի մը վրայ) պարզեց, բաշխեց, դասակարգութեան մը լծեց հանրական գործերը՝ յանգելու համար ներդաշնակութեան մը, որուն ամիրաններէն շատ քիչերը կրցան ըլլալ բաժանորդ և հանդէսամուտ. վասն զի իրենց անցեալ ազնուապետական անչափգիտութեան փոխարէն՝ խաղալիկ եղան երիտասարդական ու կարի հասարակական անչափգիտութեան մը, բանիւ, դիրով, գործով:

Իրենց՝ ամիրաններուն՝ կենցաղի ճոխ թատրէն իբր խալառ անհետանալուն բուն պատճառն ալ՝ իրենք էին: Սեղանատոններուն մեծ մասը ծագումով Ակնէն էր՝ բարդկացած տգէտ այլ խորագէտ ու խորամանկ ալ մարդոցմէ, որ կը բանեցունէին իրենց խելքը, իրենց բան ու գործերէն դուրս, իրար քարընդոտնելու, նաեւ վրէժխնդրութեանց: Ամիրաներու անկումին մէջ մեծ դերեր խաղացած են՝ չարահաճ սպրդողներու և փայփայիչ շողոքորթողներու հետ՝ նախանձն ու բարոյական անարժանութիւնները, զորս տգեղ կ'ըլլայ նշանակել հոս. « Ես անոր հէրը տանիծեմ, ես անոր հախէն տիգամ » ները՝ վերջնաբաններն եղած են յաճախ երկու ամիրաներու միուն անհրաժեշտ կործանումին միւսի մը ձեռքով, և յատուկ մոլութիւններ մըն ալ՝ եղած են պատճառ իրենց խօլ մտնումներուն և տոհմային վատանամբաւութեանց: Պոլիսի միջակային ժողովուրդն ալ՝ 60-65էն շատ առաջ կ'աւանտ էր այս ամէնը:

Անոնց տոհմային բարձրամտութեան ալ բաւական ճարակ կը մատուցանէր՝ Բեփլեփեփեփեփեփեփ, որ էր հին ու աւանդական վարչապետութիւն մը թաղային ու և կեղեցապատկան գործերու՝ ընտրուած միայն Պատրիարքէն ու պատասխանատու միայն անոր՝ ըստ երկուստեք հաճութեանց, դուն ուրեք ըստ իմաստուն հանրասիրութեան ու անփառասիրութեան: